ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/83

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Սամավտո» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթ, մարդատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4230-2020 գրությամբ «Սամավտո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.03.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/859-2020 գրության հիման վրա, 18.03.2020թ.-ին «Սամավտո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 18.03.2020թ.-ին:

19.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/83 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

26.03.2020թ.-ին, 14.04.2020թ.-ին և 17.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 14.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.04.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.03.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/859-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17 և 18-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Սամավտո» ՍՊԸ–ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջների համաձայն անգործության ժամկետի ավարտից հետո www.armeps.am համակարգի միջոցով «Սամավտո» ՍՊԸ–ին ներկայացվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը և ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն վերջինս www.armeps.am համակարգի միջոցով ընդունել է պայմանագիր կնքելու շնորհումը, բայց պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները «Սամավտո» ՍՊԸ–ն զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սամավտո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սամավտո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սամավտո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4230-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 06.04.2020թ.-ի ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Սամավտո» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «մարդատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման» նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.12.2020թ. /կարծում ենք տեխնիկական վրիպակի պատառով 2019թ. փոխարեն նշվել է 2020թ./ տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-8 և 10-18 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Գնահատող հանձնաժողովը 27.03.2020թ.-ին «Սամավտո» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու նախագիծը, որը ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում (27.03.2020թ. – մինչև 12.03.2020թ. ներառյալ), այսինքն մինչև 12.03.2020թ. ներառյալ, պետք է ստորագրեր պայմանագիրը և պայմանագրի ապահովումը և դրանք ներկայացներ պատվիրատուին:

Համաձայն փոստային առաքանի թիվ 568 կտրոնի համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն 12.03.2020թ.-ին պատվիրված նամակով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ) ներկայացրել է ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն 1-8 և 10-18 չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը

ուղղված գրության՝ «Սամավտո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ-ցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված>>:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Սամավտո» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «մարդատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման» նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթին և Ընթացակարգի 1-8 և 10-18 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո «Սամավտո» ՍՊԸ-ին առաջարկ ներկայացնել 1-8 և 10-18 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու:

Գնահատող հանձնաժողովը 27.03.2020թ.-ին «Սամավտո» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու նախագիծը, որը ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում (27.03.2020թ. – մինչև 12.03.2020թ. ներառյալ), այսինքն մինչև 12.03.2020թ. ներառյալ, պետք է ստորագրեր պայմանագիրը և պայմանագրի ապահովումը և դրանք ներկայացներ պատվիրատուին:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն 1-8 և 10-18 չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Սամավտո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

«Սամավտո» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (27.03.2020թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (27.03.2020թ. - մինչև 12.03.2020թ. ներառյալ) 12.03.2020թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է: Մասնավորապես Համաձայն փոստային առաքանի թիվ 568 կտրոնի համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն 12.03.2020թ.-ին պատվիրված նամակով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ) ներկայացրել է ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

Սակայն գնահատող հանձնաժողովը 13.03.2020թ. ժամը 15:30 տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրել է, որ «Սամավտո» ՍՊԸ-ն 1-8 և 10-18 չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Սամավտո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել /տես ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն /:

Հատկանշական է, որ նշված որոշմամբ գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ 12.033.2020թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով ՀՀ պաշտպանության նախարարությանն է ուղարկվել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Սամավտո» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, հնարավոր թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «Սամավտո» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Մինչդեռ ինչպես նշել ենք, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված>>, իսկ ինչպես արդեն նշել ենք, պայմանագիրը և պայմանագրի ապահովումը կապի կազմակերպությանն է ներկայացվել 12.03.2020թ., այսինքն՝ վերջին օրը, ուստի <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի ուժով այդ փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնած:

Ուստի նման պայմաններում գտնում ենք, որ հիմնավոր չէ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի այն պնդումը, որ «Սամավտո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիրը չի կնքել և չի ներկայացրել պատվիրատուին:

Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, կարծում ենք, որ Ձեր կողմից ՀՀ ՊՆ համապատասխան հարցում կատարելու դեպքում կպարզվի, գնահատող հանձնաժողովը փոստային առաքման միջոցով ստացել է «Սամավտո» ՍՊԸ-ի կողմից ստարագրված և 12.03.2020թ. ուղարկված պայմանագիրը, սակայն միգուցե նշված փաթեթը ստացվել է ՀՀ ՊՆ-ի կողմից սահմանված ժամկետից՝ 12.03.2020թ. հետո, ինչը չի նշանակում, որ պայմանագիրը ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ (կամ ընդհանրապես չի ներկայացվել):

Գտնում ենք, որ նման պայմաններում «Սամավտո» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների խախտում, քանի որ ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել է պայմանագիրը և պատվիրատուին է ներկայացրել պայմանագրի ապահովումը:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Բողոքներ քննող անձին խնդրել է «Սամավտո» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և առավել ևս պայմանագիր կնքելուց հրաժարում, և

վերջինիսի չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մարդատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սամավտո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 1-8-րդ և 8-18-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

12.02.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 27.02.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում կազմել պայմանագրի կատարման ապահովում, ստուգել պայմանագրի նախագիծը և ստորագրելու համար ներկայանալ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչություն՝ ք. Երևան, Բուզդևանդի 5 հասցեում: Բացի այդ, անհրաժեշտ է armeps.am համակարգում պատասխանել պայմանագրի շնորհմանը: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 010-26-43-53 հեռախոսահամարով՝ հանձնաժողովի քարտուղար Արման Բաղրամյանին:

Հանձնաժողովի 13.03.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն 1-8-րդ և 8-18-րդ չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Փոստային կտրոնի /թիվ 568 առաքանի, կոդը RR276018789AM/ համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն 12.03.2020թ.-ին պատվիրված նամակով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ) ուղարկել է առաքանի:

www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /թիվ 568 առաքանի, կոդը RR276018789AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 17.03.2020թ.-ին:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4230-2020 գրությամբ «Սամավտո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մարդատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.12.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սամավտո» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 05.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգի 1-8-րդ և 8-18-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

12.02.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 27.02.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում կազմել պայմանագրի կատարման ապահովում, ստուգել պայմանագրի նախագիծը և ստորագրելու համար ներկայանալ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչություն՝ ք. Երևան, Բուզրևանդի 5 հասցեում: Բացի այդ, անհրաժեշտ է armeps.am համակարգում պատասխանել պայմանագրի շնորհմանը: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 010-26-43-53 հեռախոսահամարով՝ հանձնաժողովի քարտուղար Արման Բաղրամյանին:

Հանձնաժողովի 13.03.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Սամավտո» ՍՊԸ-ն 1-8-րդ և 8-18-րդ չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Անդրադառնալով «Սամավտո» ՍՊԸ-ի կողմից 12.03.2020թ.-ին պատվիրված նամակով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ք.

Երևան, Բագրևանդի 5 հասցեով առաքանու ուղարկմանը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել նաև, որ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պետք է պարզել ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով, որոնց հիման վրա Բողոքներ քննող անձը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը ներկայացրած դիրքորոշմամբ՝ չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ «Սամավտո» ՍՊԸ-ի կողմից 12.03.2020թ.-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղարկված առաքանիում առկա է եղել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-4/3» ծածկագրով պայմանագրի օրինակը և պայմանագրի կատարման ապահովումը, որպիսի պայմաններում միայն, «Սամավտո» ՍՊԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովին ուղարկված նամակում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, հնարավոր կլիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության Օրենքի և Կարգի դրույթներին համապատասխան կատարած լինելու փաստը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սամավտո» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4230-2020 գրությամբ «Սամավտո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/83 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սամավտո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ